Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
16 սեպտեմբերի 2024 թվականի N 347-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի սեպտեմբերի 20-ից

«5000 idcoin՝ IDsalary փաթեթին միանալու համար» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 20.09.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից **IDsalary** փաթեթի շրջանակներում թողարկված նոր քարտ, որը պատվիրվել է Արշավի ընթացքում և ունի գործող կարգավիճակ: Նախքան Արշավի մեկնարկը **IDsalary** փաթեթի շրջանակներում գործող Քարտերի Քարտապանները չեն մասնակցում Արշավին:
1.3 **Քարտապան՝** Արշավի շրջանակներում թողարկված Քարտի քարտատեր:
1.4 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.5 **QR վճարում՝** Իդրամի սպասարկման ցանցում Քարտապանի կողմից իրականացված QR վճարում: Ընդ որում, հիմք է ընդունվելու Քարտապանի կողմից Բանկում գործող բոլոր հաշիվներով իրականացված QR վճարումների հանրագումարը:
1.6 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Սույն Արշավի ընթացքում՝ 20.09.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ, IDsalary փաթեթի շրջանակներում Քարտ պատվիրելու դեպքում ինչպես գործող, այնպես էլ նոր հաճախորդները կստանան 5000 idcoin (հարկված), ստորև նշված պայմաններին միաժամանակ բավարարելու դեպքում.

- Կապահովեն նվազագույնը 75 000 ՀՀ դրամ աշխատավարձի ստացումը Քարտին՝ Քարտի ակտիվացումից հետո 50 օրացուցային օրվա ընթացքում,
- Կկատարեն նվազագույնը 5 000 ՀՀ դրամի QR վճարում՝ Քարտի ակտիվացումից հետո 50 օրացուցային օրվա ընթացքում:

2.2 Սույն Արշավի ընթացքում Քարտապանին տրամադրվում է առավելագույնը 5000 idcoin:
2.3 idcoin-երը կտրամադրվեն պարբերաբար մինչև 19.02.2025թ.-ը ներառյալ՝ սույն արշավի պայմաններին բավարարելուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում:
2.4 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.5 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված է հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/666/noa9o21tx3o9xjdwixalavk3odyu0qj7/IDcoinTC_final.pdf

2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: